

"Հարավկովկասյան երկաթուղի" ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվություններ և
Անկախ աուդիտորի եզրակացություն

2023թ. դեկտեմբերի 31

Անկախ աուդիտորի եզրակացություն

«Հարավկովկասյան երկաթուղի» փակ բաժնետիրական ընկերության բաժնետերերին և Տնօրենների խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ (այսուհետ՝ Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 2023թ. դեկտեմբերի 31-ը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, բացառությամբ «Կարծիքի ձևափոխման հիմքեր» պարագրաֆում նկարագրված հարցի հնարավոր ազդեցության, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ ֆինանսական վիճակը առ 31-ը դեկտեմբերի 2023թ., ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա նրա գործունեության արդյունքներն ու դրամական հոսքերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների:

Կարծիքի ձևափոխման հիմքեր

Ինչպես ներկայացված է ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 15-ում, Ընկերությունը՝ չնայած այն փաստին, որ գոյություն են ունեցել հանգամանքներ, որոնք հիմք են հանդիսացել ակտիվների հնարավոր արժեզրկման, չի իրականացրել հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների փոխհատուցվող գումարի չափում, համաձայն ՀՀՄՍ 36. «Ակտիվների արժեզրկում» ստանդարտի՝ որոշելու համար տվյալ ակտիվների հաշվեկշռային արժեքի նվազեցման և արժեզրկումից կորստի ճանաչման անհրաժեշտությունը 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվություններում: Մենք կարծում ենք, որ 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքը գերազանցատված է, իսկ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված արժեզրկումից կորուստի գումարը՝ թերազանցատված: Սակայն, ինչպես ներկայացված է 15-րդ ծանոթագրությունում, Ընկերությունը 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ իրականացրել է հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեզրկման թեստ, ինչի արդյունքում հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքը նվազել է համապատասխանաբար 10,106,072 հազար դրամով և 51,439,062 հազար դրամով և նշված ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվել է արժեզրկումից կորուստ 61,545,134 հազար դրամ: Մեր կարծիքով 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված արժեզրկումից կորուստի կոմուլիատիվ գումարը բոլոր էական առումներով ճշմարիտ է, սակայն 2023թ. դեկտեմբերի 31-ին

Crowe and Asatryans LLC
“Dom Moskvyy” Business Center,
7, Argishti str., 1st floor,
Yerevan, 0015, Armenia
T. +(374) 60 53 23 23
+(374) 99 54 33 88
E-mail: general@crowe.am
www.crowe.com

Քրոու ընդ Ասատրյանս ՍՊԸ
“Դոմ Մոսկվի” Բիզնես Կենտրոն,
Արգիշտի փող., 7, 1-ին հարկ,
Երևան, 0015, ՀՀ
Հ. +(374) 60 53 23 23
+(374) 99 54 33 88
E-mail: general@crowe.am
www.crowe.com

ООО Кроу энд Асатрянс
“Дом Москвы” БЦ,
ул. Аргисhti, 7, 1-ый этаж
г. Ереван, 0015, Армения
Тел. +(374) 60 53 23 23
+(374) 99 54 33 88
Эл. почта: general@crowe.am
www.crowe.com

ավարտված տարվան վերագրված և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված արժեզրկումից կորուստի գումարը գերազանհատված է:

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտների (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը նկարագրված է մեր հաշվետվության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» հատվածում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահների էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՄԽ կանոնագիրք) և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների՝ մեր աուդիտի համար կիրառելի վարքագծի պահանջների, և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն նշված պահանջների և ՀԷՄՄԽ կանոնների: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համապատասխան սույն ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որը ղեկավարությունը համարում է անհրաժեշտ սխալի կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Ընկերությունը, ընդհատել դրա գործունեությունը, կամ էլ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, և ներկայացնել աուդիտորական եզրակացություն, որը ներառում է մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը ամենաբարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ սույն ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական թերահավատություն: Ի լրումն՝

- Բացահայտում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվություններում առկա էական խեղաթյուրումների ռիսկը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավականաչափ և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, գեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ, կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:
- Ձեռք ենք բերում աուդիտին առնչվող ներքին հսկողության համակարգի մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Ընկերության ներքին հսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների և առնչվող բացահայտումների հիմնավորվածությունը:
- Եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք, թե արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որը կարող է էական կասկած առաջացնել Ընկերության անընդհատ գործելու կարողության նկատմամբ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա պարտավոր ենք աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, երբ այդպիսի բացահայտումները համապատասխան չեն, ձևափոխել մեր աուդիտորական եզրակացությունը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանը դադարեցնել գործունեության անընդհատության հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողության համակարգին վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Մենք կառավարման օղակներում գտնվող անձանց նաև տրամադրում ենք հայտարարություն, ըստ որի՝ մենք պահպանել ենք անկախության վերաբերյալ վարքագծի պահանջները, ինչպես նաև նրանց տեղեկացնում ենք բոլոր հարաբերությունների կամ այլ հարցերի մասին, որոնք, ըստ ողջամիտ ենթադրության, կարող են անդրադառնալ մեր անկախության վրա, և, որտեղ կիրառելի է, նախազգուշական միջոցառումների մասին:



Կառավարման օղակներում գտնվող անձանց հաղորդված հարցերից մենք որոշում ենք այն հարցերը, որոնք համարվել են առավել նշանակալի ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում, և, հետևաբար, հանդիսանում են աուդիտի առանցքային հարցեր: Այս հարցերը նկարագրում ենք աուդիտի եզրակացությունում, եթե օրենսդրությամբ կամ իրավական ակտերով չի արգելվում տվյալ հարցի հրապարակային բացահայտումը, կամ, երբ խիստ բացառիկ հանգամանքներում, որոշում ենք, որ տվյալ հարցը չպետք է ներկայացվի աուդիտորի եզրակացությունում, քանի որ կարող է ողջամտորեն ակնկալվել, որ դրա ներկայացման հետ կապված բացասական հետևանքները ավելի շատ կլինեն, քան դրա ներկայացմամբ պայմանավորված հանրային օգուտը:

Այս աուդիտի առաջադրանքի պատասխանատուն Ալբերտ Ասատրյանն է:

05 ապրիլի 2024թ.

Ալբերտ Ասատրյան

Տնօրեն-բաժնետեր,
առաջադրանքի ղեկավար

Քրոու ընդ Ասատրյանս ՍՊԸ

ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն



Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

Հազար դրամ		2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
	Ծնք.		
Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ	5	17,669,567	23,674,241
Վաճառքի ինքնարժեք	6	(17,527,379)	(18,964,571)
Համախառն շահույթ		142,188	4,709,670
Այլ եկամուտ	7	1,788,410	1,669,878
Իրացման ծախսեր	8	(141,307)	(158,265)
Վարչական ծախսեր	9	(2,107,527)	(2,258,745)
Այլ ծախսեր	10	(61,834,525)	(1,977,170)
Գործառնական գործունեությունից շահույթ		(62,152,761)	1,985,368
Ֆինանսական եկամուտ	11	1,852,624	1,367,934
Ֆինանսական ծախսեր	12	(303,354)	(497,209)
Շահույթ մինչև հարկերը		(60,603,491)	2,856,093
Շահութահարկի գծով ծախս	13	1,913,369	(551,554)
Տարվա շահույթ		(58,690,122)	2,304,539
<i>Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ</i>			
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ հարկումից հետո		-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ		(58,690,122)	2,304,539

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են Ընկերության ղեկավարության
 կողմից 2024թ. ապրիլի 05-ին:

Ալեքսեյ Մելիկով
 Գլխավոր տնօրեն




Վահրամ Ավետիսյան
 Վարչակազմի հաշվապահ



Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է
 ըմբերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 63-րդ էջերում
 ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար դրամ		2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
	Ծնք.		
Ակտիվներ			
<i>Ոչ ընթացիկ ակտիվներ</i>			
Հիմնական միջոցներ	14	30,481,287	41,334,559
Ոչ նյութական ակտիվներ	15	7,228,932	60,366,884
Բանկային դեպոզիտներ	16	75,315	696,120
		37,785,534	102,397,563
<i>Ընթացիկ ակտիվներ</i>			
Պաշարներ	17	2,052,599	2,634,660
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	18	628,629	1,447,723
Սահմանափակ օգտագործման կարճաժամկետ ակտիվներ		468,164	347,553
Վաճառքի համար պահվող ակտիվներ		148,065	148,547
Բանկային դեպոզիտներ	16	5,320,503	6,150,491
Դրամական միջոցներ և համարժեքներ	19	464,998	1,873,421
		9,082,958	12,602,395
Ընդամենը ակտիվներ		46,868,492	114,999,958
Սեփական կապիտալ և պարտավորություններ			
<i>Կապիտալ և պահուստներ</i>			
Բաժնետիրական կապիտալ	20	104,152,946	104,152,946
Կուտակված վնաս		(60,034,516)	(1,344,394)
		44,118,430	102,808,552
<i>Ոչ ընթացիկ պարտավորություններ</i>			
Վարկեր և փոխառություններ	21	852,188	5,478,409
Աշխատակիցներին հատուցումների գծով պահուստ		-	227,529
Հետաձգված հարկային պարտավորություններ	22	-	1,913,369
		852,188	7,619,307
<i>Ընթացիկ պարտավորություններ</i>			
Վարկեր և փոխառություններ	21	225,246	546,011
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	23	1,089,237	2,970,558
Կրեդիտորական պարտքեր անձնակազմին		577,538	627,153
Աշխատակիցներին հատուցումների գծով պահուստ		-	47,435
Պահուստներ	24	5,853	380,942
		1,897,874	4,572,099
Ընդամենը պարտավորություններ		2,750,062	12,191,406
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		46,868,492	114,999,958

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 63-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար դրամ	Բաժնետիրական կապիտալ	Կուտակված վնաս	Ընդամենը
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	104,152,946	(3,648,933)	100,504,013
Տարվա շահույթ	-	2,304,539	2,304,539
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ հարկումից հետո	-	-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ	-	2,304,539	2,304,539
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	104,152,946	(1,344,394)	102,808,552
Տարվա շահույթ	-	(58,690,122)	(58,690,122)
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ հարկումից հետո	-	-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ	-	(58,690,122)	(58,690,122)
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	104,152,946	(60,034,516)	44,118,430

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 63-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Շահույթ մինչև հարկերը	(60,603,491)	2,856,093
<i>Ճշգրտումներ՝</i>		
Հիմնական միջոցների մաշվածություն	1,012,302	955,215
Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա	4,030,375	3,842,099
Հիմնական միջոցների արժեզրկում	10,106,072	-
Ոչ նյութական ակտիվների արժեզրկում	51,439,062	-
Կոնցեսիոն ակտիվների բարելավումից ստացված ոչ դրամական հասույթ	(1,998,850)	(2,986,444)
Հիմնական միջոցների օտարումից զուտ եկամուտ	(102,120)	1,333,561
Ակտիվների ապամոնետաժումից եկամուտներ	(24,565)	(4,464)
Պաշարների դուրսգրում	7,676	7,150
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստի փոփոխություն	-	11,118
Այլ պահուստների փոփոխություն	(592,484)	(133,902)
Ֆինանսական եկամուտ	(661,810)	(470,076)
Ֆինանսական ծախս	303,354	497,209
Փոխարժեքային տարբերությունից (օգուտ)/վնաս	(1,118,976)	(808,657)
<i>Գործառնական շահույթ նախքան շրջանառու կապիտալի փոփոխությունները</i>	<i>1,796,545</i>	<i>5,098,902</i>
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի փոփոխություն	771,749	(848,034)
Պաշարների փոփոխություն	311,022	189,374
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի փոփոխություն	(964,055)	981,038
<i>Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցներ</i>	<i>1,915,261</i>	<i>5,421,280</i>
Ստացված տոկոսներ	608,514	303,299
Վճարված տոկոսներ	(248,027)	(422,350)
Վճարված շահութահարկ	(803,982)	(148,383)
<i>Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ</i>	<i>1,471,766</i>	<i>5,153,846</i>

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների ձեռքբերում	(92,253)	(962,289)
Ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(427,533)	(368,452)
Դեպոզիտների ներդրում	(4,822,562)	(6,265,572)
Դեպոզիտների մարում	6,316,618	3,275,530
<i>Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ</i>	974,270	(4,320,783)
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Վարկերի մարում	(3,805,584)	-
<i>Ֆինանսական գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ</i>	(3,805,584)	-
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)	(1,359,548)	833,063
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	(48,875)	(55,024)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբի դրությամբ	1,873,421	1,095,382
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջի դրությամբ	464,998	1,873,421

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 63-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ: